ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/43431-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-699-07.11.2023-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1270 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-699-07.11.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ ունի հետևյալ առաջարկները.

1. Նախագծի 1-ին հոդվածում «բառեր» բառն օգտագործել եզակի թվով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. «Դատախազության մասին» օրենքի իրավակարգավորմանը համահունչ իրավական նորմ է նախատեսված նաև «Քննչական կոմիտեի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով, ըստ որի՝ անձն ազատվում է Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից, եթե ունի դատախազի, դատավորի, քննիչի, հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի:

Հիմք ընդունելով վկայակոչված հոդվածը և վերոնշյալ նորմերի համալիր ուսումնասիրության արդյունքում շահագրգիռ մարմինների կողմից արձանագրված դիտարկումները, մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեի կադրային քաղաքակա-նության հարցում խնդիրների հնարավոր առաջացման առումով, առաջարկում ենք «Քննչական կոմիտեի մասին» օրենքով նախատեսված վերոնշյալ կարգավորումները համապատասխանեցնել «Դատախազության մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունների տրամաբանությանը, այն է՝ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի համար ևս սահմանել Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատվելու հնարավորություն, եթե ունի համապատասխան պաշտոնում 2 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1270 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արա Մկրտչյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-699-07.11.2023-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-699-07.11.2023-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետում «երեք» բառերը փոխարինել «երկու» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Դատախազության մասին» ՀՕ-198-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին, ուժի մեջ մտել՝ 2018 թվականի ապրիլի 9-ին: Օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով նախատեսվում է, որ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձն ազատվում է արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից եւ քննություններ հանձնելուց, եթե վերջին հինգ տարվա ընթացքում ունի դատավորի, դատախազի, քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոններում կամ փաստաբանական գործունեության առնվազն երեք տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող, մասնագիտական աշխատանքի ստաժ:

Վերջին շրջանում դատախազության համակարգում իրականացվող բարեփոխումները, դատախազներին տրամադրվող դրամական բավարարումների աճը հանգեցրել են դատախազի պաշտոն զբաղեցնելու ցանկություն ունեցող անձանց թվի աճի, հատկապես երիտասարդ, բարձրագույն ուսումնական հաստատությունն նոր ավարտած անձանց շրջանում: Անհրաժեշտ է փաստել սակայն, որ առանց պրակտիկ գիտելիքների եւ աշխատանքային որոշակի փորձառության՝ երիտասարդ կադրերի համար բավականին դժվար է դատախազի պաշտոնը զբաղեցնելուց անմիջապես հետո ապահովել անհրաժեշտ անձնային, մասնագիտական, կամային որակներ՝ դատախազի պաշտոնից բխող բարդ եւ պատասխանատու պաշտոնեական պարտականությունների իրականացման համար: Մինչդեռ, վերջին տարիներին քրեական վարույթների աննախադեպ թվով աճը, դատախազների գերծանրաբեռնված աշխատանքը պահանջում են համարժեք լուծումներ: Այսպես, Օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով նախատեսված իրավակարգավորման տրամաբանությունը կայանում է նրանում, որ որոշակի աշխատանքային փորձառություն եւ մասնագիտական համապատասխան ճանապարհ անցած անձանց հնարավորություն ընձեռվի, առանց արդարադատության ակադեմիայում համապատասխան ուսումնառություն անցնելու, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովում համապատասխան քննությունը հանձնելուց, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուց հետո ՀՀ գլխավոր դատախազի կողմից նշանակվել դատախազի պաշտոնում, քանի որ, ըստ էության, մասնագիտական պատրաստման այն հմտությունները եւ արդյունքները, որոնք անձը կարող էր ձեռք բերել Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընթացքում, վերջինիս մոտ արդեն իսկ առկա են ունեցած մասնագիտական փորձառության շնորհիվ: Գտնում ենք, որ օրենսդրի նշված մոտեցումը լիովին

արդարացված է, բխում է փորձառու եւ արհեստավարժ կադրերով դատախազական համակարգը համալրելու հրամայականից, ապահովում է անհրաժեշտ իրավական կառուցակարգեր՝ կադրային հնարավոր խնդիրները օպերատիվ կերպով լուծելու նպատակով: Հետեւաբար, անհրաժեշտ է նշված կառուցակարգը դարձնել էլ ավելի ճկուն, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատավորի, դատախազի, քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոններում կամ փաստաբանական գործունեության առնվազն երկու տարին արդեն իսկ բավարար ժամանակահատված է դատախազի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ անձնային, մասնագիտական, բարոյակամային որակների ու հմտությունների ձեւավորման եւ դատախազական պարտականությունների իրականացման համար՝ առանց արդարադատության ակադեմիայում համապատասխան ուսումնառության դասընթացներ անցնելու:

Հարկ է փաստել նաեւ, որ վերջին տարիներին հանցավորության զարգացման միտումները ցույց են տալիս, որ գնալով ավելանում է այնպիսի հանցագործությունների տեսակարար կշիռը, որոնց քննությունը, քննության նկատմամբ դատախազական հսկողությունը եւ դատարանում մեղադրանքի պաշտպանությունը պահանջում են մասնագիտական որոշակի փորձառություն եւ արհեստավարժություն: Մասնավորապես, համապատասխան փորձառություն չունեցող դատախազների համար բավականին դժվար կլինի ապահովել դատախազական գործառույթների պատշաճ իրականացումն այնպիսի հանցատեսակների կապակցությամբ, ինչպիսիք են, օրինակ, կոռուպցիոն բարդ սխեմաներով կատարված հանցագործությունները եւ կիբեռհանցավորությունը: Ընդ որում, հարկ է փաստել, որ ՀՀ հաստիքների ավելացմամբ պայմանավորված՝ նախատեսվում է հաստիքների ավելացում նաեւ ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներում, որպիսի պայմաններում անհրաժեշտ են առավել ճկուն իրավական կառուցակարգեր մասնագիտական անհրաժեշտ փորձառություն եւ որակներ ունեցող մասնագետների հոսքը դատախազական համակարգ ապահովելու համար:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է Օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի համար արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից եւ քննություններ հանձնելուց ազատվելու համար սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի ստաժի պահանջը փոխարինել առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժի պահանջով, քանի որ նշված ժամանակահատվածն արդեն իսկ բավարար է անհրաժեշտ պրակտիկ մասնագիտական հմտությունների եւ անձնային որակների ձեւավորման համար:

3. Նախագիծը մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է սահմանել առավել ճկուն իրավական կառուցակարգեր ՀՀ դատախազության համակարգը փորձառու եւ արհեստավարժ կադրերով ապահովելու նպատակով:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային եւ/կամ այլ ռազմավարություններ

Նախագիծը կապված չէ ռազմավարական փաստաթղթերի հետ: